

ՄԱՍԻՍ

Շ Ա Ւ Ա Ր Ա Ր Ե Ր Թ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 32

11 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հակալոյական Մրցման արդիւնք	ՅՈՎ. ԹԱԻՇԱՆՃԵԱՆ
Նորեկները գրականութեան մէջ	ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ
Մատուռ (Բանաստեղծութիւն)	ԷՏՄՕՆ ՌՕՍԴԱՆ
Բժշկական Քրոնիկ	ՏՈՔԹ. Տ. ԱԼԱԼԶԱԷՐՏԻ ՈՐԴԻ
Նիշիի բանաստեղծութիւնները	ԵԴ. ԳՕԼԱՆՃԵԱՆ
Սիրերգ	ՄԻՍԱԳ ՄԵՇԱՐԵՆՅ
Սլոյիւն աղեսները (Բ. մրցանակաւոր լողուած)	ԲԻԷՌ ԱԲԷՌԻ

Խմբագրական — Նօթեր — Զանգագոյն

Բ Ա Վ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դրո. եւ զաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ծրանք կամ 5 բուլլի: Թղթաստանի ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Զի հրասարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

Զեռ-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیہ غلطہ (داسیس) غرضہ می ادارہ سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սւնենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը դնէ։

ՇԱՐԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲՆՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԵՐԻՏԱՐ

Չարլը Պօլու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կասաբեալ Երաւաւորութիւնք։

Մասնահիւղեր գաւառաց բոլոր ֆաղաֆներուն մէջ։

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

Եթէ երախայ մը նիհար է և չի զաւալիր նէ, ախորժակ չունի և կերածը կատարեալ չի մարսեր նէ, և ակույնները — որոնք չեն մեծնարկող նէ — որ ընտանապէս միւս աղետները կ'աւելցընէ թող իրեն արուի:



SCOTT'S EMULSION.

Ասիկայ մանկանց համար ախորժելի կերակուր և դէղ մըն է, և երախայն զայն խմած ատեն վերջի աստիճանի ուրախութեան մէջ կ'ըլլայ: Սալոր շուտով կը տեսնէ թէ ինչպէս երախային բոլոր վիշտերը անմիջապէս կը դադրին, որպէս թէ նոր արիուն և նոր կեանք բոլոր անկարգութիւնները շնչելով՝ մանկան ախտերը առողջութեան և զուարգութեան փոխադրեցին: Երախայն միշտ պատրաստ է այս նոր (ուտելիք և) բմպելիքին և ախորժակով կրեմէ: Արակսի զաւալել և պղտիկ ճերմակ ակույնները առանձնաւի և վիշտերու կ'ըսկսին երեան ելլել: Ըսգօթի Բաղադրութիւնը երախայից առողջարար գիրութիւնն և զաւալում կուտայ, մարսողութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւն կը պատճառէ:

ԸՍԿՕԹԻ ԲԵՂԱԹՐՈՒԹԻՈՒՆ

բոլոր տղայոց Սերելին է և զանոնք շուտով վարդադոյն երեղծի և զօրաւոր և կատարեալ առողջութեան պատկերներու կը փոխէ: Ըսգօթի Բաղադրութիւնը՝ վրան այս նշանով վարդադոյն փաթեթի մէջ ծալուած շիշերէն կը ճանչցուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւնն ընել պէտք է:

20

Բոլոր գեղարքները և գեղաձառանքը կը ծախեն:

ՅՈՒՇԱՏԵՏՐ ԳՐՊԱՆԻ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Որ միեւնոյն ասեմ թուրքերէն, հայերէն, գաղղիերէն եւ յունարէն լեզուներով Օրացոյց ըլլալէ զաս գործի մարդոց համար կարգ մը կարեւոր ծանօթութիւններ կը պարունակէ:

Դիւ Պարզ կազմ 3 դրուշ. — Հնօր շաքակազմ 5 դրուշ. — Կաշեկազմ ոսկեգօծ 8 դրուշ:

Յ. Մասթէոսեան տունը այս օգտակար հրատարակութեան գտած լաւ ընդունելութենէն գոհ, այս տարի նոյնին աւելի ընդարձակեալ և հրատարակած է, այսինքն իւրաքանչիւր էջը մէկ օրուան յատկացում:

Դիւ Պարզ կազմ 5 1/2 դրուշ. — Հնօր շաքակազմ 8 դրուշ. — Կաշեկազմ ոսկեգօծ 12 դրուշ:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՅՈՒՇԱՏԵՏՐ մեծ դիրքով, սեղանի համար, նոյնպէս չորս լեզուաւ, կարեւոր ծանօթութիւններով եւ հաշուհաշումարի ձեւով գծուած, տկուն անգղիական լաքակազմ գին 7 դրուշ:

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Թղթալանառահոցը, Թիւ 27, Ֆինճանճըյար, Կ. ՊՈԼԻՍ:

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառներու բոլոր թղթալանառներու եւ գրավահառներու հոյ:

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 32

11 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Ուրախ ենք որ, կարճատև ընդհատումէ մը ետք, Մասիսի վերերեւումը կը զուգահիւր հակալքողական յօդուածներու մրցման արդիւնքը պարունակող Յայտարարութեան հետ, զոր հրատարակելու պատիւն ունինք ներկայ թիւով: Տիար Յովհաննէս Թաւադէան, այդ մրցման հաստատիչը, ինքն իսկ գրի առած ու ստորագրած է այդ Յայտարարութիւնը որուն առաջին մասը տեղեկագիր մըն է գրեթէ, թիւերու, դասակարգութեանց և բացատրութեանց շարքով մը, որոնք անհրաժեշտ են այս կարգի լրագրական կամ գրական մրցումներէ. երկրորդ մասը կ'ամփոփէ իր տեսութիւններն ու եզրակացութիւնը: Զուգելով բան մը պակսեցնել այդ գրութեան շահեկանութենէն, չպիտի խօսինք անոր վրայ, որպէսզի ընթերցողները վայելեն առաջնութիւնը՝ անոր պարունակութեան տեղեկանալու համար ծայրէ ծայր, ինչպէս արդէն բուն հետաքրքրութիւն մը կ'արտայայտուի օրերէ ի վեր, խմբագրական շրջանակներէն դուրս ալ, մեր ամէն դասակարգերուն մէջ:

Անցողաբար, կ'արժէ շեշտել միայն, թէ Տիար Թաւադէան՝ այս մրցման համար նախապէս իր տրամադրած վաթսուն անգլ. ոսկիին վրայ ուղած է քսան ոսկիի յաւելում մը ընել, պատշաճ բաշխում մը կատարելու համար թերթերուն որոնց ստացած մրցանակի առաւելագոյն գումարը կը հասնի, այսպէսով, 15 ոսկիի և նուազագոյնը 5 ոսկիի: Իսկ յօդուածագիրներուն ստացած մրցանակները կը տարուբերին, տասնէն մինչեւ մէկ ոսկիի միջեւ: Մանրամասնութիւնները պիտի տեսնուին յաջորդ էջին մէջ:

Նիւթական տեսակէտէն դուրս, զոր ու

մանք արհամարհել կեղծեցին, այս մրցումը, — տեսակին մէջ բոլորովին նոր՝ մեզի համար, — բարոյական ու առողջապահիկ տեսակէտներով իր մեծ կարեւորութիւնը ունէր ստեղծելու և ապարդիւն ալ չմնաց: Արեւոյթիւնը ըլլալով աղէտ մը որ անգգաւարտ կը գործէ իր աւերումները ընտանեկան յարկերու տակ, անոր դէմ մաքառում մըն ալ աստիճանաբար պէտք է կատարուէր, տակաւ առ տակաւ նուազեցնելու համար ալքոլամոլներուն թիւը. և ճիշդ ներկայ լրագրական պայքարն ալ նոյն ուղղութեան և նպատակակէտին կը յանգէր: Երեւոյթը յատկանշական էր մանաւանդ անոր համար որ, ամբողջ Թրքահայ մամուլը հինգ-վեց ամիս շարունակ զբաղեցաւ ալքոլին հարցով: Նոյն իսկ թեր ու դէմ գրութեանը, — ո՛չ անշուշտ անհաճ խճճանքներն ու անձնական տգեղ հեղանքները, — հանրային ուշադրութիւնը վառ պահելու առաւելութիւնն ունեցան՝ ալքոլամոլութեան շուրջը գրութեանը:

Մասիսի համար բաղդաւորութիւն մըն էր որ իրեն վիճակեցաւ առաջին անգամ հրապարակել այս գերազանցապէս հանրագումար մրցման հաստատուիլը, և այսօր ալ կը փակէ դայն նոյն գոհունակ զգացումով: Կը յուսանք թէ մեր յարգելի պաշտօնակիցները որոնք փութկոտութիւնը ունեցան, ներկայ տարւոյ մայիսի սկիզբը, արտասպառելու Տիար Թաւադէանի առաջին Յայտարարութիւնը ի մասին հակալքողական մրցման պայմաններուն, ազնուութիւնը պիտի ունենան նաև հրատարակելու մեր ներկայ թիւին մէջ երեւցող Յայտարարութիւնը որ անոր արդիւնքը կը ծանուցանէ:

ԽՄԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

ՀԱՎԱԼՔՈՒԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ

ՄՐՅԱՆԱԿՆԵՐՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՒ ԲԱՇԽՈՒՄԸ

(ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՏԻԱՐ ՅՈՎ. ԹԱԽԱՆՃԵԱՆԻ)

ՆԻՒ-ԵՈՐԲ, 27 Հոկտ 1903

Յարգոյ խմբագիր Մասիսի

Աւերակամութեան դէմ Թրքահայ մամուլին՝ վերջին չորս ամիսներուն մէջ՝ հրատարակած յօդուածներէն ձեռքս հասածներուն ամբողջին թիւն է 202 հատ. պատճառ ունիմ հաւատալու որ հրատարակուած յօդուածներուն ամէնքը ձեռքս հասած չեն, մասնաւորապէս Աւեսաբերի ոչ մէկ թիւը ընդունած եմ: Այս 202 յօդուածները կարգաւ և մրցանակները որոշելը բաւական ընդարձակ գործ մըն էր թէև, սակայն 12 օրուան մէջ աւարտեցաւ, որով համար մասնաւորապէս չնորհապարտ եմ Յանձնախումբի պատուարժան անդամներուն:

Յանձնախումբը 100 կէտի վրայ որոշեց յօդուածներու արժանիքը, 85 և աւելի ստացողները մրցանակի արժանի համարելով. մրցանակի արժանացած յօդուածները իրարմէ փոքրաթիւ կէտերով միայն տարբերեցան. այսպէս 100 կէտ ստացած էր Ա. մրցանակը շահողը, 99՝ երկրորդ մրցանակը շահողը, 98՝ իւրաքանչիւր Գ. մրցանակները շահողները, 97՝ երկու Դ. և 96՝ մէկ Դ. մրցանակ շահողները, 95՝ երեք Ե. և 94՝ երկու Ե. մրցանակները շահողները. բազմաթիւ յօդուածներ 93էն մինչև 85 կէտեր ստացեր էին, որոնց ամէնքն ալ ընտիր գրութիւններ են, բայց որովհետև մրցանակ չշահող և սակայն մրցման դրուած յօդուածներուն որոնք ըլլալը պայման դրած էինք՝ հրատարակել, ուստի այս կարգի առաջնակարգ յօդուածներուն որոնք ըլլալը «պատուաւոր յիշատակութեամբ» իսկ անկարելի է նշանակել: Այս կարգին վերաբերող աղին յօդուածագիրները պիտի գոհանան անշուշտ սա նկատումով որ իրենց գրածները օգտակար հանդի-

սացած են, վասն զի կարգացուեցան անոնք բազմաթիւ ընթերցողներու կողմէ և անշուշտ իրենց ազդեցութիւնը ունեցան՝ որով համար հանրութիւնը չնորհակալ է իրենցմէ: Բաց աստի, կը յուսանք որ սոյն պատուարժան յօդուածագիրները ընթերցողներուն ևս մասնաւոր երախտագիտութեանը առարկայ դարձան, որոնք չպիտի դադրին զիրենք օրինելէ ամբողջ կեանքերնուն մէջ, բան մը՝ որ շատ աւելի կ'արժէ քան ո և է մրցանակ:

Մասնախումբը մասնաւորապէս կը փափաքի յայտարարել թէ «Մրցանակներու որոշումը կատարուած է քս իր դասողութեամբ միայն, զոր անսխալ նկատելու յաւակնութիւնը չունի բնաւ. գիտակից է նաև սա իրողութեան թէ ուրիշ մասնախումբ մը թերեւս բոլորովին տարբեր արդիւնքի յանգէր մրցանակներու բաժանման մասին. կ'ընդունի նաև որ շատ ընտիր, օգտակար և նպատակայարմար հատուածներ պարունակող բազմաթիւ յօդուածներ կան մրցանակէ դուրս թողուածներուն մէջ. կը ցաւի սակայն որ այսպիսիները վարձատրելու կարող չէ՝ մրցանակներու թուոյն սահմանափակ ըլլալուն պատճառաւ. կը փափաքի նաև աւելցնել որ եղածը զուտ գրական մրցում մը չըլլալով, յօդուածներու արժանիքը այդ տեսակէտէն նկատողութեան առնուած չէ՝:

Ա. Մրցանակը շահած է Բիւզանդինի 2674 թուոյն մէջ հրատարակուած Արթ. Տ. Վահան վրդ. Տէր Մինասեանի «Խոստովանութիւն մը» վերնագրով յօդուածը: Հեղինակին զրկուած է որոշեալ 10 աւգիլական ոսկին:

Բ. Մրցանակը շահած է՝ Մասիսի 15րդ թուոյն մէջ հրատարակուած Տիար Բիւզանդինի «Հակալքութեան պայքարը» վեր-

նագրով յօդուածը, Հեղինակին ղրկուած է որոշեալ 5 անգլ. ոսկին:

Գ. Մրցանակը շահած է՝ Արեւելեան Մամուլի 27 թուոյն մէջ հրատարակուած Արամ Անտոնեանի «Հրաշալի հեղուկը» վերնագրով յօդուածը. հեղինակին ղրկուած է որոշեալ 3 անգլ. ոսկին:

Դ. Մրցանակը շահած է նաեւ՝ Բիւրակցի 37 թուոյն մէջ հրատարակուած Աշուր Էֆ. Եռստֆի «Արեւելեան բարձման համար միջոցներ» վերնագրով յօդուածը, հեղինակին ղրկուած է որոշեալ 3 անգլ. ոսկին:

Դ. Մրցանակը շահած է՝ Սուրհանդակի 1914 թուոյն մէջ հրատարակուած Ալտէպարանի «Երկու խօսք ալքողի վրայ» վերնագրով յօդուածը. հեղինակին ղրկուած է որոշեալ 2 անգլ. ոսկին: Դ. մրցանակը շահած է նաեւ Արեւելի 5966 թուոյն մէջ հրատարակուած Տօքթ. Տ. Էֆ. Ալլահվէրտի որդիի «Արեւելեան դէմ» վերնագրով յօդուածը. հեղինակին ղրկուած է որոշեալ 2 անգլ. ոսկին: Դ. մրցանակը շահած է նաեւ Մանգուսի 1260 թուոյն մէջ հրատարակուած Լիւէճեան Էֆ. ի «Պէտք է խմել» վերնագրով յօդուածը. հեղինակին ղրկուած է որոշեալ 2 անգլ. ոսկին:

Ե. մրցանակը շահած է Սուրհանդակի 1929 թուոյն մէջ հրատարակուած Հակալքուական Բժիշկի մը «Արեւելեան վնասները և դարմանելու միջոցները» վերնագրով յօդուածը: Հեղինակին ղրկուած է որոշեալ 1 անգլ. ոսկին: Ե. մրցանակը շահած է նաեւ Մանգուսի 1248 թուոյն մէջ հրատարակուած Տօքթ. Վալանթին Էֆ. Նալբապի «Ալքողին չարիքները մեր կազմաւորութեան վրայ» վերնագրով յօդուածը, Հեղինակին ղրկուած է որոշեալ 1 անգլ. ոսկին: Ե. մրցանակը շահած է նաեւ Բիւզանդիոնի 2744 թուոյն մէջ հրատարակուած Տօքթ. Միւռոն Էֆ. Զիլեանի «Վերջին խօսք» վերնագրով յօդուածը. հեղինակին ղրկուած է որոշեալ 1 անգլ. ոսկին: Ե. մրցանակը շահած է նաեւ Արեւելի 5905 թուոյն մէջ հրատարակուած Տօք. Ս. Էֆ. Վ. Եզեկիէլեանի «Ոգելից ըմպելիներու գործածութիւնը և ալքողամուրու-

թիւնը» վերնագրով յօդուածը. հեղինակին ղրկուած է որոշեալ 1 անգլ. ոսկին: Ե. մրցանակը շահած է նաեւ Բիւրակցի 32 թուոյն մէջ հրատարակուած Արամ Էֆ. Թորոսեանի «Արեւելեան վնասները և դարմանը» վերնագրով յօդուածը. հեղինակին ղրկուած է որոշեալ 1 անգլ. ոսկին:

Բիւզանդիոն Ա. մրցանակը ստացող յօդուածը հրատարակած ըլլալով, կը ստանայ 10 անգլ. ոսկի, ինչպէս Մասիս Բ. մրցանակը ստացող յօդուածը հրատարակած ըլլալով՝ կը ստանայ 5 անգլ. ոսկի, կրկին հրատարակելով սոյն երկու յօդուածները:

Հինգ թերթեր հաւասար թուով (երկերկու հատ) մրցանակ ստացած յօդուածները հրատարակած ըլլալով, բացարձակ առաւելութեամբ այսպիսի յօդուածները հրատարակող թերթին համար սահմանեալ 10 անգլ. ոսկին առանձին շահող մը եղած չէ: Այս գումարը սակայն հինգ թերթերու վրայ հաւասարապէս բաժնելով, իւրաքանչիւրին միայն 2 ոսկի կը մնայ, գումար մը՝ որ կանխաւ որոշեալ երկու քանակութեանց և ոչ մէկը ըլլալով, սոյն 10 ոսկիին վրայ բացառաբար 15 ոսկի ևս աւելցուած է, որպէս զի խօստացուած գոնէ 5 ոսկիի գումարը ստանան թերթերը. ուրեմն Արեւելի, Արեւելեան Մամուլ, Բիւզանդիոն, Բիւրակցի, Սուրհանդակ 5ական անգլ. ոսկի կը ստանան, ըստ պայմանի հրատարակելով մրցանակ ստացած յօդուածները: Իսկ երկրորդ մեծագոյն թուով մրցանակ ստացած յօդուածները հրատարակող երկուքն ալ հաւասարաթիւ (մէկական) ըլլալով և դարձեալ վերոյիշեալ պատճառաւ, այս բանին սահմանեալ 5 ոսկիին վրայ բացառաբար 5 ոսկի ևս աւելցնելով, սոյն 10 ոսկին բաժնուած է Մասիսի և Արեւելեան Մամուլի միջև, որով իւրաքանչիւրը կը ստանայ 5 անգլ. ոսկի, ըստ պայմանի հրատարակելով մրցանակ ստացած յօդուածները: Կը խոստովանիմ թէ ասկէց առաջ ո և է մրցանակի կամ մրցանակներու կոտորակուելուն անհամամիտ մը եղած եմ, բայց փորձառութիւնը կը ստիպէ այժմ զիս որ այլ ևս չմեղադրեմ այս դրութեան հետեւելու հար-

կադրուող Յանձնախումբերը կամ անհատները, որոնց կը վիճակուի մրցանակներու որոշում տալը: Աշխարհի վրայ չգիտեմ թէ կա՞յ դորձ մը որ այսքան ապերախտ ըլլայ, նոյն իսկ եթէ ըլլայ ան նուազ աշխատութիւն պահանջող, որպիսի է այսօրինակ մարմիններու պաշտօնը. ես ինքնին չպիտի ուզէի ո եւ է նկատումով այսպիսի պաշտօն մը ստանձնել, բան մը՝ որմէ աւելի մեծ փաստ մը չեմ կրնար ներկայացնել քննիչ Յանձնախումբի պատուարժան անդամոց հանդէպ՝ երախտագիտութեանս չափը բացատրելու համար:

Յարգելի յօգուածագիրներուն գալով՝ նոյնքան անկեղծութեամբ շնորհակալութիւնս կը մատուցանեմ իրենց, և ուրախ եմ որ անոնցմէ ստուար մեծամասնութիւն մը մրցանակաւորուած կը համարի ինքզինքը, քանի որ ծառայութիւն մըն էր զոր մատուցին իրենց համայնքին, և բարեբախտաբար կարող եմ ապահովել զիրենք որ սպասուածէն շատ աւելի արդիւնաբեր եղած է իրենց գրածները: Բազում նամակներ ստացած եմ, որոնց հեղինակներուն եթէ մէկ մասին կրնանք կեղծիք կամ ակնկալութիւն վերագրելով՝ վերապահութեամբ հաւատալ զրաձնուն, անդին սակայն կան շատ մը այնպիսիներ որոնք անկեղծութեան կնիքը կը կրեն, և որոնց ո եւ է ակնկալութիւն անկարելի է վերագրել. այսպիսիներէ շատերը մինչեւ իսկ ստորագրութիւն դրած չեն իրենց նամակներուն, եւ ուրախութեամբ կը յայտնեն թէ իրենց կարգացած յօդուածներէն զգածեալ՝ բոլորովին թողած են ոգելից ըմպելի գործածելը. ուրիշներ կը գրեն իրենց ծանօթ «խման»ներու վրայ եղած ազդեցութեան մասին. շատեր առանց մասնաւորելով յիշելու. որն ըլլալը այն յօդուածին կամ յօդուածներուն՝ որոնց կը վերագրեն այս հրաշքը, բարութիւնը, ուխտը, ուրախաւթ փոփոխութիւնը, եւլն.: Ասոնցմէ եթէ նոյն իսկ միայն 100ին 10ը անկեղծ ըլլան, այդ իսկ ինձ համար բաւական գոհացուցիչ է: Այս չորս ամիսներու մէջ յառաջ եկած արդիւնքը թէ ո՞ր աստիճան կարեւոր եւ անհրաժեշտ պէտք մըն էր, կ'ապացուցուի նոյն իսկ վկայու-

թեամբը անոնց որոնք խճճանքի եւ նզովքի ենթարկեցին այս հակալքողական պայքարը՝ ըստ առածին թէ «պտուղ չունեցող ծառին» քար չեն նետեր». նոյն իսկ շատերուն ըսելը թէ այսպիսի յօդուածներ գրելը օգուտ մը չընեն, կը հաստատէ թէ օգուտի, դարմանի պէտք ունեցող հիւանդութիւն մըն է ալքոլամոլութիւնը, որուն վրայ խօսուին իսկ՝ ըստ իս՝ դէպ ի ուղիղ կողմը առնուած քայլ մըն է, որ երբեք անկարեւոր չի կրնար նկատուիլ. եւ այդ իսկ է ձեռք բերուած արդիւնք կոչածս: Չորս ամիս անաջ՝ եթէ գինովնալը նուազ մեղադրելի կը համարուէր՝ քան այսօր, եթէ հարկւր քարոզներէն մէկին մէջ խօսք մը կ'ըսուէր ալքոլամոլութեան դէմ, եւ այսօր երկուքին մէջ կը չեղուի, եթէ հարկւր անձերէ մէկը մտքէն կ'անցընէր արեւցողի մը վրայ արգահատելով անոր խրատ մը տալ, եւ այսօր մէկէ աւելին անզգալաբար կը մղուի լուռ չմնալ այդպիսի առթիւ, եթէ եկեղեցականներէն հարիւրին տասը առանց քաշուելու հրապարակաւ կը խմէր ալքոլը եւ այսօր հարիւրին ինը կ'ընեն այդ բանը, եւ այն ալ ոչ հրապարակաւ եւ կամ քաշուելով եւ քանի մը հատ պակաս խմելով, եթէ ուսուցիչներէն ոմանք չափազանց շատ կը խմէին եւ այսօր կը զգուշանան որ չըլլայ թէ աշակերտաց կամ տնօրէնին խօսակցութեան նիւթ մատակարարէ իրենց վիճակը, վերջապէս եթէ ընտանիքի հայր մը, ամուրի չափահաս մը կամ երիտասարդ մը ժամը 9ին տուն երթալուն տեղ այսօր 8ին կ'երթայ, տասը գաւաթին տեղ՝ ինը կը խմէ, օղին առանց ջուրի խմելու տեղ՝ ջուրով կը խմէ եւ այսպէս նուազ կ'արբենայ եւ ուրախութիւն կը պատճառէ իր կնոջ կամ ծնողքին, ուրեմն ուրախալի է որ հակալքողական պայքարին հետեւանքը ապարդիւն չեղաւ:

Եւ այս առաւելութիւնները, օգուտները եւ ուրախացուցիչ պարագաները ձեռք բերելու համար եթէ արդարեւ մեր բարեկամներէն ոմանց գլուխները «արդուկած» եղանք, չորս ամիսներ հարկադրելով զիրենք հակալ-

քուական յօդուածներ տեսնել եւ կարդալ, կամ պատճառ դարձած ըլլալով որ թերթերը լեցուին հակալքողական յօդուածներով, էհ, այդքան մըն ալ իրենց բաժին թող ինկած ըլլայ՝ համայնքին բարոյականը բարձրացնելու համար ամէն անհատի ունեցած պարտականութենէն. մեր ալ շատ անգամներ այդպիսի ձանձրոյթներու դատապարտուած ըլլալինս կ'արծեմ մեր այդ բարեկամները չեն կրնար ուրանալ:

Յուսամ ներողամիտ կ'ըլլայ ընթերցողը, եթէ տող մըն ալ անձնական տեսակէտով գրեմ: Երբ մէկ կողմէն զիս քննադատողներէն, պախարակողներէն եւ ինձ ամէն տեսակ դիտաւորութիւններ վերագրողներէն վշտացած չըլլալս կը յայտնեմ, միւս կողմէ ալքումովութիւնը նուազեցնելու նպատակին հասնելու համար իրենց գրչին օժանդակութեամբը օգնող բարեսիրտ անձանց երախտագիտութիւնս կը յայտնեմ: Ամենէն քաղցր պարտականութիւն մը եւս ունիմ զոր ամենայն անկեղծութեամբ կը փութամ կատարել, այն է՝ յայտնել խորին և սրտազին չնորհակալութիւններս թրքահայ մամուլի պատուարժան Տնօրէնութեանց և Խմբագրութեանց որոնք այնքան ազնուութեամբ վարուեցան հետս և առանց բացառութեան, գրկաբաց հիւրընկալեցին առաջարկութիւնս և լայնօրէն բացին իրենց սրէնակները (արդարեւ գոհողութիւն ընելով) ալքումովութեան դէմ գրուած յօդուածներու հրատարակութեան համար. առանց իրենց յօժարութեան և օժանդակութեան՝ ոչինչ ձեռք կըրնար բերուիլ: Եթէ երբեք պատճառ ստեղծած եղայ իրենց յատկացուած գումարներով՝ աւելորդ և անճան (չըսեմ չտես և անքաղաքաւար) դիտողութեանց ենթարկելու զիրենք, ապահով եմ որ այդպիսի անհարկի ակնարկութիւններու մասին իրենք ալ ինձ չափ ներող են, քանի որ ստացած գումարնին նուէր մը չէ որ իրենց եղած է, հապաբաժանորդագիրն է, ըստ պայմանի ձրիաբար այլոց զրկուելիք թերթերուն: Եթէ բան մը ունիմ խնդրելիք ձեզմէ, ազնիւ Տեառք, յոյն ալ սա է որ չարունակէք հրատարակել,

հակալքողական գրութիւններ (ինչպէս արդէն կ'ընէիք) և երբեմն երբեմն ալ Խմբագրականներով աւելի ևս վառ պահէք հակալքողական զգացումը: Մեր համայնքին բարոյական կրթութիւնը մեծ աստիճանով մը ձեր ձեռքն է: Յուսանք որ մրցանակ ստացող յօդուածներուն կրկին հրատարակութիւնը՝ երկարատեւ օգտակարութիւն մը ունենայ, և չատերու լուրջ խորհրդածութեան և ընդունելութեան արժանանայ, և ամէնուս մտքին վրայ տպաւորէ օա իրողութիւնը թէ, ալքումը թէեւ չըլլայ անմիջական մահ պատճառող, սակայն ապահովաբար անոր գործածութիւնը պատուոյ, զբաղումի, ընչից, դիրքի, բարոյականի և առողջութեան կը պատճառէ մահ՝ ուչ կամ կանուխ:

Յ. Ս. ԹԱԽՇԱՆՃԵԱՆ

ՆՈՐԵԿՆԵՐԸ

Երկար ատենէ ի վեր մտադրած եմ գրել այս յօդուածը որ այսօր թերեւս քիչ մը ուշ նկատուի. բայց մեր մամուլին համեստ շրջանակին մէջ գրական դէմքերը ու երեւոյթները այնքան շուտով չեն մոռցուիր, ինչպէս որ ընդհանրապէս կը պատահի եւրոպական մամուլին մէջ: Հետեւաբար, հակառակ ուշացած ըլլալուս, կ'ենթադրեմ որ այժմէութեան պակասը պատճառ մը չէ լռելեայն անցնելու մեր հայ կիին գրողներուն մէջ երեւոյթ երկու նորեկներու վրայ որոնք մասնաւորապէս արժանի են ուշադրութեան և գնահատման:

Հայ կիին գրողները դիտած եմ որ մասնաւոր հետաքրքրութիւն մը կ'ազդեն. ասիկա շատ բնական բան է. փափաքելի էր սակայն որ կիին գրող մը չգոհանար իր համեմատական յաջողութիւնով. ըստ իս՝ միասակար բան է իր մտաւորական ուժերը սահմանափակել կնոջական գրականութեան մէջ. ասոր համար է որ ամէն երկիրներու մէջ կիները դժուարաւ միջակութենէն վեր կ'ելլեն. այն հազուադէպ ընտրեալներուն համար արդէն

քննադատութիւնը կը դադարի կնահաճոյ մեծարանքներ ընելէ. անոնք այլ ևս իրաւունքը ունին մեծ արուեստագէտներու պէս դժուարահաճութեանց և խտտութեանց հանդիպելու: Սպասելով որ մեր այր եղբայրակիցները պատիւը ընեն մեզմէ ոմանք դատել այդ տեսակէտով, հարկ է որ մեր կանացի դիւրադգածութիւնը տեղափոխուի և վարժութիւնք դէմ առ դէմ գտնուի մեր սխալներուն, մեր տկարութիւններուն հետ:

Մինչև հիմա բարքերը ու մեր կենցաղը այնպէս մըն էին որ կին գրողները կը գովուէին, կը շփանային, իրենց առաջին փորձերէն իսկ, այս դիւրահաճութիւնը գրեթէ զիրենք զերծ կ'ընէր պարտականութիւններէ. կին մը միշտ կը յաջողէր կին ըլլալուն համար. մինչև այսօր ալ քիչ մը այնպէս չէ: Այս համբաւի դիւրութիւնը պատճառ եղած է որ կին գրողները յամառին իրենց թերութիւններուն մէջ և մանաւանդ թէ ջանք չընեն իրենց մակարդակէն բարձրանալու: Նորեկներու համար հարցը կը փոխուի սակայն զգալապէս, և աւասիկ թերեւս ասոր համար է որ մեզի ներկայացող և յիշատակութեան արժանի երկու debutanteներն ալ օժտուած են արդէն այսօրուրէն իսկ այն լուրջ և հաստատ յատկութիւններով որոնք պիտի յատկանշեն իրենց տաղանդը:

Տիկին Արշակունի Թէոդիկ բոլորովին անծանօթ մը չէ գրական աշխարհին. իր գեղեցիկ թարգմանութիւնները ցոյց կուտան արդէն այն լրջութիւնը զոր կը գտնենք իր ինքնատիպ գրուածքին մէջ Ծաղիկ կանանց Հանդէսին առաջին թիւին մէջ. այդ ուսանողական յիշատակները իրենց անսեթեւեթ և մանաւանդ յաւակնութենէ գերծ էջերով կը յայտնեն մասնաւոր խառնուածք մը. Տիկին Թէոդիկ իր առաջին յօդուածով իսկ առանց քանքի լայն տեղ մը կը բանայ ինքզինքին հայ կին գրողներու շարքին մէջ. իր լրջութիւնը և մանաւանդ մինչև ցարդ ինքզինքը պատրաստելու համար դրած յարատեւութիւնը պէտք է իբր օրինակ ծառայեն բոլոր անոնց որոնք վաղուան նորեկները պիտի ըլլան: Տիկին Թէոդիկ կրնար մինչև

հիմա և շատերէն գերազանցապէս՝ էջերով բան հրատարակած ըլլալ, բայց աւասիկ ինք սպասած և հասունցուցած է իր տաղանդը և շատ լաւ է ըրած. փոխանակ երկար տոնն դեգերելու, և ինքզինքը ենթարկելու անհարկի շողորորթութիւններու կամ նախատինքներու և թերեւս նոյն իսկ մոլորելու, անիկա ի յայտ կուգայ ամրացած երկար աշխատութեան մը արգասիքովը, որոշ և շահեկան խառնուածքի մը տէր, գիտակից և հասուն: Տիկին Թէոդիկ եթէ իր ձեռնհասութեանը միացնէ բեղուն գրական գործունէութիւն մը, իրաւունք պիտի ունենայ անտարակոյս ինքզինքը մեր կին գրողներու լաւագոյններէն նկատելու, իր լեզուներու հմտութիւնը թոյլ պիտի տայ իրեն՝ մաքին հորիզոնը ընդարձակելու և միեւնոյն տոնն հայ գրականութիւնը օժտելու հետզհետէ ալ աւելի գեղեցիկ էջերով:

Երկրորդ նորեկը իր անակնկալ յայտնութիւնը կ'ընէ հեռուէն: Աւասիկ արուեստակեալ և stylisteներու յոգնեցուցիչ ու վատթարացնող սերունդէ մը ետքը՝ առաջին ձայնը դէպ ի ճշմարիտ և մեծ բնութիւնը. գողարիկ և սիրալիր հոգի մը՝ երիտասարդութեամբ բաբախուն, Օրիորդ Սաթենիկ Յարութիւնեանի հոգին որուն մաքուր շողիւնը փափկութեամբ կը տաքցնէ իր գիւղական պատկերները (Արեւելեան Մամուլի մէջ), պարզ ու ջինջ իր ֆրազները, բառերը, փայփայանք մը ունին իրենց մէջ որ գուրգուրանքով կ'օժէ դաշտերը, ծաղիկները, այգիներու կանանչազեղ թաւուտները. գերազանցապէս կին՝ իր երկչոտութիւններով՝ ծաղիկներուն վրայ կոխելու, որպէսզի անոնք չթօշնին... ինքը հեռու ըլլալով քաղքենի արուեստակեալ եւ ամլացնող կեանքէն, իր հոգին բնական եւ բեղուն կը մնայ ութըթուացող՝ մեծ բնութեան ձայներուն, երանդներուն ու երեւոյթներուն հետ. թանկագին ձայն մըն է ասիկա որ հեռուէն կուգայ խառնուիլ մեր գրականութեան մէջ, թերեւս մեծ գրագիտուհի մը կայ ծածկուած՝ դեռ գրեթէ մանկական բայց այնքան անուշ այդ տաղանդին մէջ. մեր գաւառացի գրողները

ամէնքն ալ մեծ խառնուածքներ եղած են տոկոսն եւ ինքնատիպ. ամէն հաւանականութիւն կայ որ Օրիորդ Սաթենիկ Յարութիւնեան պիտի հետեւի անոնց շաւղին, մանաւանդ թէ կաղզուրիչ օրինակ մը ունի իր հօրը մէջ (Թլկատինցին) ուրկէ արդէն ժառանգած է իր տաղանդին գլխաւոր յատկութիւնները:

Աւասիկ թերեւս անկատար կերպով՝ բայց իրենց գլխաւոր գիծերուն մէջ նշանակելի երկու նորեկները հայ կին գրողներու մէջ. ասոնք են որ պիտի որոշեն վաղուան գրականութիւնը եւ պիտի յարատեւել տան ինչ որ այսօր մենք պարտական ենք կազմել, գրեթէ հիմնել. երանի թէ իրենց ձգուած գրական ժառանգութիւնը վերջապէս արժանի ըլլար իրենց երիտասարդ եւ գեղեցիկ տաղանդներուն:

ՀԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

ՍԽՅԵՐԳ

Ճառագայթի պէս ոսկեւարս ու թեթեւ, երբոր ճամբէն կ'անցնի հըպարտ, լուսարագ բան մը սրտէս կ'ըլլայ բոցին պատարագ իր աչքերուն՝ ուր կը մոռնամ ես արեւ:

Երազային, ծաղիկի պէս նրբաւոր, երբ կը ժպտի պատուհանին ետեւէն, Թոխներ հոգւոյս մէջ լուսարագձ կը թեւեն Խօլ անուրջով կապոյտներու հեռաւոր:

Եւ երբ կ'երգէ ջութակին հետ սարսուռն Մեղմածաւալ հեշտերգն իրեն ցայգային, կարծես աչքերն իր լուսափաղփ կը նային Տենդոտ պահին՝ մէջն իմ հոգւոյս ալբերուն:

ԻՐԻՍԱՅ ՄԵԾԱՐԵՆՅՑ

Տ. Վահան վրդ. Տէր—Մինասեան, հակալքողական Մրցանակին առաջին «պսակաւորը», Մասիսի յառաջիկայ թիւով պիտի վերսկսի շարունակել իր «Արեղաձագն յԱրմաշ» ինքնատիպ յօդուածներու շարքը, որոնք այնքան հետաքրքրութեամբ կը կարդացուին:

ՆԻՉԷԻ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երբ մարդ, կարդալէ վերջ Զարաթուստրայի հեղինակին արձակ գործերը որոնք գրեթէ միշտ հատակոտորներէ կը բաղկանան — յաճախ գաղափարով կրկնուած ու ձեւով բարեփոխուած հատակոտորներ՝ ո՛չ աւելի 1—3 երեսէ—անցնի անոր բանաստեղծութիւններուն, զանոնք արձակներէն տարորոշող, հոգեկան և մտաւորական հանգամանքով զանոնք առաւելալիւ ընող գրեթէ ոչինչ կը գտնէ հոն: Անշուշտ ոտանաւորի ձեւին հանգամանքը կայ, յանգերը, վանկերու համաչափութիւնը կամ, վեռ լիպոք սահմանելով՝ վանկերուն անհամաչափութեան համաչափութիւնը, եթէ չկայ մտաւորական նկարագրի՝ զգայական կորովի՝ մէկ բառով արտայայտման տարբերութիւն: Բայց իր արձակները, որոնք, զուտ քննադատական կամ իբր բանասիրական — պատմական ըլլալ կոչուելու ատենն ալ, քնարերգական են՝ այսինքն լի անհատին սեփական խառնուածքին կամ իր սիրելի բառով՝ idiosyncrasieին վայրենաշունչ փառաբանութիւններով, միթէ նուա՞ղ չափաբերական են. իր բառախաղերէն կամ նմանաձայնութիւններէն զատ զորս գիտութիւնն առհաւական կը կոչէ ամէն գրուածքի մէջ, միթէ չկա՞ն տողեր որոնք անշատաբար «ոտանաւոր» մը պիտի ճանչցուէին: Ասկէ զատ, վեռ լիպոքի նախասիրութիւնը զոր իր մղուող բուն բնութիւնն ունի, կարելի չէ՞ միթէ չփոթել իր արձակներուն գոռ ներդաշնակութեան գաղտնիքին հետ: Նիչէի գաղափարներուն ամէնէն ջերմ հակառակորդներն իսկ կը հիանան իր արձակին վրայ, իր լեզուին վրայ: Էտուառ Շիւռէ որ Նիչէի գործը «ոչինչը ծածկող մարմարակերտ հիւսնալի ջերմի մը» կը նմանցնէ ա՛յնքան խորազգաց տխրասարսուռ նմանութեամբ մը, սապէս կը խօսի անոր արձակին վրայ. — Արձակ մը որ տաղին (ode) խոյանքներն ունի, ալպեան հեղեղներուն մոլեգին փրփուրը՝ խորունկ մոնջիւնը»։ Կ'ըսէի թէ իր արձակներէն անցնելով իր ոտանաւորներուն, մարդ նոր բան մը չգտներ, ո՛չ

արուեստով ո՛չ մտածումով : Իր ֆրանսական դաստիարակութիւնը զինքը կը մղէր ամէն գործածքի մէջ անպատճառ ֆրանսերէն բառ մը դնելու, յաճախ չա՛տ սովորական բառեր զորս աղէկ նշանակած ու թուած է իր գործերուն ֆրանսերէնի յաջողագոյն թարգմանիչներէն Հանրի Ալպէս : Արդ, այդ օտար բառերը չկա՛ն իր ոտանաւորներուն մէջ ընդհանրապէս : Բայց տեսէ՛ք օրինակ մը ֆրանսերէն բառի գործածումի՛ն. «Իմ երջանկութիւնս» խորագրով բանաստեղծութեան մէջ.

«Ո՛վ խրոխտ զանգակատուն, յաւէտ կանգուն —

«Բու զանգակներուդ խորունկ ձայնին տեղը կը ծածկես դուն —

«Պիտի ըսէի ֆրանսերէն թէ դուն իր accent aiguն ես» : — Արուեստամոլի լոկ զգայական քմահաճոյքներ են այս ֆրանսերէն բառերուն ներմուծումը առանց իմաստասիրական կամ բանաստեղծական — հոգեկան պէտքի մը. և արդարեւ, ֆրանսական դաստիարակութիւնն՝ իր գրականութեան ճաշակներով իրեն տուած է միայն խաբուսիկ արտաքինութիւններու սէր մը, բառախաղերու զուարթութիւն մը, պատկերի անթելադիր անխոկ հաճոյքներ, — ամէն ինչ որ ֆրանսական է, այսինքն երեւոյթական և երբե՛ք մտաւորական :

Մնացեալ հանգամանքներն իր մէջ — երգիծանքին հանճարային զօրութիւնը, զգայութեանց վարդագոյն գոռ վայրենութիւնը, երեւակայազօր լեռնազիծ կամքով վարուած տեսիլներուն անեղ յստակութիւնը, մտածումին բնայեղիչ նորակերպարան սաստկութիւնը, ամէնքն ալ կը պատմեն գերման նկարագիրը և ամէնքն ալ Հեկկելի վարդապետութեան մէկ շարունակութեանը համար կը գործեն, գեղեցիկը հիմնովին անջատելով բարբէն և անոր ընդդէմ հանելով դայն իրրեւ միակ ճշմարտութեան մը արտայայտութիւնը կամ իր խօսքով, իբրեւ «կեանքին կամեցողութեան միակ երեւոյթը» : Գեղեցիկին աստիճանները՝ ապրելու կամքին աստիճաններն են. տգեղը՝ վատոյժը որուն կը նպաստեն բարին, գութը, և ամէն վերացական կրօնք ու իտէալիզմ, ապրելու կամ

քին ստորնագոյն աստիճանն է, ինչպէս այդ աստիճանին հասցնող միջոցները որոնք ամէն կեանքի՝ նուազեցուցիչ տարրեր են : Սակայն մինչ Հեկկելի մէջ գեղեցիկը առարկայական անանձն զօրութիւն մըն է, միակ ճշմարտութեան մը տիեզերական արտայայտութիւնը, Նիչէի մէջ բացարձակապէս ենթակայական նկարագիր մը ունի ան, իբր երկար արուեստ մը : Իր գեղեցկագիտութեան ապոդիքսեան և դիոնիսեան երկու կարողութիւններով հիմնովին կը շեղի Շոբէնհաուէրէ :

Ապոդիքսեան մարդը, գիտնալով հանդերձ թէ արտաքին աշխարհի մասին կազմած իր գեղեցկագիտական տեսիլներուն ամբողջութիւնը իրականութիւնը չէ՛ որ կը բացատրէ, կը հեռանայ յոռետեսութենէն իր անհատական գեղեցիկին հայեցողութեամբ. անիկա այսպէս կ'ըսէ կեանքին. — «Կ'ուզեմ քեզ, որովհետեւ քու պատկերդ գեղեցիկ է, որովհետեւ արժանի ես երազուած ըլլալու» : Իսկ դիոնիսեան մարդը կը բաժնուի յոռետեսութենէն, որովհետեւ կը տեսնէ կամքին յաւիտենականութիւնը՝ երեւոյթներուն մշտնջենական հոսումին տակ : Ու կ'ըսէ կեանքին.

— «Կ'ուզեմ քեզ, որովհետեւ դուն յաւիտենական կեանքն ես : Այս ապոդիքսեան և դիոնիսեան տեսիլներով, Նիչէ կը կարծէր բացատրած ըլլալ յունական հոգին և գտած ըլլալ աստիկեան ներդաշնակութեան ու լուստեսութեան ոսկի բանալին : Հանրի Լիհդէմպերկէր որ Նիչէի լուսագոյն կենսագիրը ճանչցուած է Յրանսայի մէջ, հանդիսաւորապէս կ'ընդունի ասիկա, հոմերեան տաղերն ապոդիքսեան՝ և յունական ծանօթ ողբերգութիւնները՝ դիոնիսեան կոչելով :

Նիչէի գլխաւոր բանաստեղծութիւնները ամփոփուած են «Իրառքանութիւններ առ Դիոնիսիոս» խորագրով հաւաքածոյին մէջ ուր ընտիր բանաստեղծութիւն մը կը յիշեմ. «Արեւը կը խոնարհի», որմէ ահաւաստի՛կ տողեր. — «Զմրուխտի նշոյլներ, երջանկութեան ցոլքեր կը խաղան դեռ գորշ անդունդին վրայ : Ո՛վ իմ կեանքիս օրը, իրիկունը կ'իջնէ : Արդէն քու աչքդ պատրաստ նուաղելու՝ կը նետէ վերջին նշոյլ մը. արդէն չիթ

առ չիթ կը մարգարտահոսին քու ցողէ ար-
ցունքներդ. արդէն, ծովերուն սպիտակու-
թեան վրայ, կը սփռուի լուիկ—քու սիրոյդ
ծիրանին, վսեմ հրաժեշտ երանութեանդ որ
դեռ կը յամի...» :

Նիշէ իր գրական կեանքին սկիզբէն մին-
չև վերջը, իր արձակ գործերուն սպառնացու-
ցիչ խանդավառութեանց հետ քով քովի՝ ու-
տանաւորներ ալ գետեղելու ժամանակ ու-
նեցած է շարունակաբար, յաճախ նոյն իսկ
իր արձակ գործերուն սկիզբն ու վերջը, ինչ-
պէս «Արշալոյս»ին ու «Զուարթ Գիտութեան»
մէջ: Կարճ արագ ոտանաւորներ, մեծ մա-
սամբ իր պարբերական գլխացաւերուն ապա-
քինման գորշ երանութեանը մէջ գրուած:
Ոմանք այնչափ կարճ են—հաղիւ երկու կամ
երեք տող զօրս proverb կը կոչէ ինք և
որոնք սակայն, այդպէս կոչուելէ առաջ,
ամէն բանէ առաջ, կրնային կոչուիլ միայն
նոր ապաքինողի կարճ ճիգեր, մտքի ան-
ձուկ սմսեղուկ ուժեր: Նիշէի ոտանաւորները
որոնք բաւական մեծ թիւ մը կազմեն. խը-
նամբով հաւաքուած իր պաշտելի քրոջ մէջ-
րըսթէն Նիշէի և իր գրասէր բարեկամուհիին
Տիկին Լուի—Սալօմէի ջանքերով, կարճ
դադարներ են որոնք ներուի թո՛ղ բառա-
խաղիս, իր մտքին մշտադուր դաժան թա-
թառներուն միջև հաղիւ թէ կրնան գետեղ-
ուիլ: Բայց անոնցմէ քիչերն են որ կ'արժեն
փոթորիկ մը նախընթացող կամ յետընթա-
ցող երկինքի պայծառ, անամպ, գեղեցիկ ան-
թերթօրէն կապոյտ պատառ մը. օրինակի հա-
մար «Արեւ կը խոնարհի» բանաստեղծու-
թիւնը զոր յիշեցի արդէն, կամ «Միջօրէին
մէջը» և կամ, ասոնցմէ նուազ յստակ,
«Սորհրդաւոր նաւը»:

Ահաւասիկ տողեր «Միջօրէին մէջ» բա-
նաստեղծութեան—«Գալարուն ճիւղէ մը
կախուած եմ ահա, և յոգնութիւնս կը ցնցեմ
կը ճօճեմ: Թաչունի մը հիւր եմ գացած,—
թռչունի բոյնի մը մէջ կը հանգչիմ: Ո՛ւր
եմ: Հեռո՛ւն: Աւաղ, հեռո՛ւն:— Ծերմակ
ծովը նիրհեր է: Իր մակերեսին վրայ ծիրանի
քօղ մը կ'երկարի: Ժայռ մը, թղենի մը,
զանգակատունը ու նաւահանգիստը,—բո-

լորտիքս հովուերգութիւններ, ոչխարներու
մայրեններ,—Անմեղութիւն Միջօրէի, ըն-
դունէ զիս:— Բոլորաբար թառեցէ՛ք լուռ,
խօ՛ւ թռչուններ—Մշտապա՛ծիկ՝ արդեօք կը
թուիք ծնած ըլլալ սիրե՛լու համար և բոլոր
սիրուն ժամանցներուն համար»:

Նիշէի բանաստեղծութիւններուն—ինչպէս
բոլոր միւս գործերուն մէջ—մասնաւորապէս
նշանակելի կարողութիւն մը կայ որ ա՛յնքան
գերմանական է որքան իր վերանցական յըս-
տակութեան նկարագրին յատուկ.—ա՛յն է
ամէնէն մտաւորական վիճակները, հոգեկան
ամէնէն նուրբ երանգները չա՛տ նիւթական,
չա՛տ թանձրախիտ ձեւերով արտայայտել
յաջողիլ:

Իր ամէնէն մեծ բանաստեղծութիւնը ինծի
համար, ա՛յն ակամայ հօօր խոստովանանքն
է զոր Նիշէ, իր ատելութիւններու եթերէն
ասդին, յանկարծ կը գետեղէ մեր աչքին
տակ, վերահաս գիշերուան մէջ բեկբեկող
կայծակի մը պէս մաքուր ու արագ—ինչպէս
է ամէն հոգեկան ճշմարտութիւն: Իր սի-
րամերժ վայրագ դրականութիւնը, իր երեւա-
կայութեան փայլակնացայտ՝ այլ թափուր
երկինքը, իր սրտին աղամանդատերէ սուտ
կարծրութիւնը, իր երեսին թափուր ծալքե-
րուն դալկահար թշուառութիւնը, իր տաղե-
րուն մէջ կուլան դա՛ռն դա՛ռն: Տարբեր
ճամբով մը Նիշէ կը հանդիպի մեծ Նազով-
րեցիին սիրոյ ճամբուն, բայց վայրկեանն,
ա՛հ, կարճ է ու միտքն յոգնած գիշերամած:
Այն գրողները որոնք «ես»ն արտացոյցել կ'ու-
զեն իբրեւ միակ երեւոյթ, իբրեւ միակ նպա-
տակ, թո՛ղ կարդան Նիշէի խոստովանանքը
որ կսկծալի հանդիսաւորութեամբ կը մոնջէ
թէ—ամէն անհատ սիրելու համար ստեղծուած
է միայն:

Եւ դառնալով բանաստեղծութեան—քանի
որ իր բանաստեղծութեանց վրայ կը խօսէ-
ինք—Նիշէի տխրասարսուռ օրինակն անդամ
մըն ալ հաստատել կուտայ մեզ թէ—ճշմա-
րիտ բանաստեղծութեան մէջ անմահ Հա-
մակրութիւն մը պէտք է ցոյայ միայն—միակ
բեղմնաւորիչ հուրը—որ՝ անհատէն վեր՝ տի-
եղերական կեանքին յաւիտենական ուրա-
խութիւնը կը ճառագայթէ:

ԵԴՈՒՅՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՓԵՆՃԱՏՈՒՄ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Կայսրը բարեհաճած է Ա. կարգի Մէծիտիյէ պատուանշան չնորհել Տպագրական Տեսուչ Վսեմ. Քէմալ պէյի, ի վարձ իր արժանեաց և խղճամիտ ծառայութեանց: Կայսերական այս չնորհը նոր հաւաստիք մըն է այն բարձր գնահատման՝ որուն կ'արժանանայ Տպագրական Տեսուչ պէյը իր կարևոր պաշտօնին կիւ բարկմանը մէջ ցոյց տուած ձեռնհասութեամբը ու կարողութեամբը, որուն առթիւ մեր չնորհաւորութիւնները կը մատուցանենք Ն. Վսեմութեան:

Հաճոյքով կ'արձանագրենք նաեւ, ինչպէս երեւցաւ նախընթաց չարթուան Պաշտօնականներուն մէջ, թէ Ն. Կ. Վեհափառութիւնը բարեհաճած է Սանիէի աստիճան չնորհել Կ. Պոլսոյ Առեւտր. Սենեակին Ա. քարտուղար և միանգամայն Առեւտր. Թերթին խմբագրապետ Զարեհ էֆ. Եռսուֆեանի, որ իր լեղուագիտութեամբը ու կարողութեամբը ձեռնհասօրէն կը վարէ այդ կրկնակ պաշտօնները: Այս բերկրալի առթիւ մեր խնդակցութիւնները կ'ուղղենք մեր համակրելի պաշտօնակցին՝ Արեւելի Տէր եւ Տնօրէնին:

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Մարդկային սիրք. — Բրօն. Պուսառ եւ Պ. Պալթագար մարդկային սիրք կը չափեն. — Տոմգ. Քիւլիազոյի փորձեր. — Հեսաֆեհաւարժ տեղեկութիւններ:

Շիտակը ըսելու համար, դիւրին գործ չէ կենդանի մարդու մը սիրտը չափել ու չափելի: Առտուընէ մինչեւ իրիկուն հիւանդանոցներու մէջ ապրող բժիշկներ, ուսուցիչ-բժիշկներ, բժկական ուսանողներ, մինչեւ հիմա չեն յաջողած ասոր, եթէ չեմ սխալիր. սակայն անդին՝ Բրօն, Պուսառ, գիտական

ու բժկական ընկերութեանց անդամ, ինչպէս նաեւ իր հայ աշխատակիցը Պ. Պալթագար, ուղած են գիտնալ թէ առողջ մարդու մը և կնոջ մը սիրտերը որքան մեծութիւն կրնան ունենալ:

Բատիօկրաֆիի չնորհիւ, կարելի եղած է չափել մարդուն սիրտը: Ռէօնթկէնեան ճառագայթներու գործիին վրայ առաջ եկած սրտին շրջագիծները թուղթի մը վրայ կ'առնուին, իսկ սրտին տարածութիւնը կարելի է չափել Ամալիէ - բլանքիմէթրով: Պ. Պ. Պուսառ եւ Պալթագար, ինչպէս կը կարդանք բժկական Հանդէսի մը մէջ, 49 անձերու սիրտեր քննեն են, 13ը էրիկ մարդու, 36ը կնոջ. այս վերջիններէն 9ը յղի: Այս անձերու սրտին մակերեւոյթին միջին մեծութիւնը 81,5 քառակուսի սանթիմէթր գտնուեր է, ամէնէն փոքր տեղը՝ 66, իսկ ամէնէն մեծը՝ 104,5 քառ. սանթիմէթր: Կիներու սրտին մակերեւոյթին միջին մեծութիւնը 76 քառ. սանթ. հաշուեր է: Կնոջ սրտին պզտիկութիւնը կրնայ վերագրուիլ սեռային ազդեցութեան, և արդարեւ էրիկ մարդէն աւելի կնոջ փոքր հասակէն, նուրբ կազմուածքէն և դնդերային տկար դրութենէն կախում ունի:

Երբ կուրծքին շրջապատը, ենթակային հասակը և ծանրութիւնը նկատի առնելու ըլլանք, թէ՛ կիներու և թէ՛ այրերու մօտ նոյն թիւերը կը գտնենք:

Աճման ժամանակամիջոցն ալ նկատի առնելիք պարագայ մըն է: Տղոց սիրտը համեմատաբար աւելի մեծ է, քան չափահասներուն: Բայց կը կարծուի թէ սիրտը իր կատարեալ դարգացման կը հասնի քսանէն մինչև քսաներկու տարեկանին, մինչդեռ մարմնոյն մնացեալ մասերը մինչև երեսուններորդ տարին:

Եղի կիներուն սիրտը յաճախ կը լայննայ, ինչ որ կը հաստատուի դիագնոստիկեան ու անատոմիական կարգ մը պարագաներու մէջ: Զախ փորոքին մակերեսին վրայ կատարուած ճառագայթական զննութիւնը ցոյց կուտայ թէ ճնշում մը կայ, որ սրտի ընդլայնման հետ միշտ առնչութիւն ունի: Պուս

լառի և Պալթաղարի կատարած զննութիւններէն կը հետեւի թէ բնական վիճակ ունեցող անձերու մօտ՝ սրտի մեծութիւնը անկախ է սեռէն. հասակին հետ կ'աճի, բայց ոչ համեմատական կերպով: Բնական վիճակի տէր անձերուն մօտ՝ գլխաւորաբար կախում ունի իր մարմնոյն ծանրութենէն, բայց և այնպէս միեւնոյն հասակը և ծանրութիւնը ունեցող անձերու սիրտերը երբեմն իրարմէ բաւական տարբերութիւն ունին:

Սրտին վրայ խօսած ատեննիս, չի մոռնանք յիշելու թէ, մարմնէն զատուելէ վերջ, տակաւին կրնայ ան բաւախել: Ողնայարաւորներու սիրտերը մարմնէն անջատուելէ վերջ՝ կանոնաւոր կերպով կը զարնեն ժամերով և երբեմն ալ օրերով:

Ունեւոր կենդանիներուն և թռչուններուն սիրտը մարմնէն անջատուելէն վերջը, երբ ա'լ դադարած է զարնելէ, վերստին կը տրոփէ: Այս պարագան ես անձամբ փորձած եմ ուսանող եղած ատենս, մեր բնախօսական Ալիսատանոցին մէջ որուն վարիչն ու Տնօրէնն էր Բարիդէն նոր վերադարձած զարգացեալ բժիշկ մը՝ Տոքթ. Գատրի Բաշիտպէյ: Աղանիի մը սիրտը մարմնէն զատուելէն վերջ, երբ ալ բաւախում, տրոփիւն ևլն. դադրեցան, անմիջապէս մայր շնջերակի միջոցաւ օքսիտացեալ արիւն ներարկեցի, ու սիրտը որ դադարած էր պահ մ'առաջ զարնելէ, վերստին կը տրոփէր:

Տքթ. Բիւլիապքօ, այս փորձերը մարդոց վրայ ալ կատարած է, և միեւնոյն արդիւնքը ձեռք ձգած:

Թոքատապէ մեռնող երեք՝ ամսու տղեկի մը սիրտը մահուանէն քսան ժամ վերջ մարմնէն հանուեցաւ: Շնչերակին միջոցաւ Լոքէի լուծոյթ(*) մը ներարկուեցաւ, սիրտը քսան վայրկեանի չափ անշարժ մնաց, յետոյ սկսաւ թեթեւ կերպով զարնել ու այսպէս շարունակեց ժամուկէսէ քիչ մըն ալ աւելի: Այս փորձը վերստին կատարուելով մարդկային սիրտերու վրայ, միեւնոյն յաջողութիւնն

ունեցաւ, նոյն իսկ եթէ մահը երեսուն ժամ առաջ պատահած ըլլար: Այս իրողութիւնները հետաքրքրական են և յիշատակման արժանի, ըստ որում մինչև ցարդ ընդունուած չէր թէ մարդկային սիրտը մահուանէ յետոյ այդչափ երկար ատեններ կարենար տրոփել: Տոքթ. Բիւլիապքոյի փորձերէն իսկ կրնայ հետեւցուիլ թէ մահուան ժամանակ տեղի ունեցած սրտի դադարումը, սրտին անգորութենէն առաջ չի գար, այլ իր հիւսուածքին մէջ մէկ քանի թունաւոր նիւթերու հաւաքումէն որուն հաւանութիւն կուտայ նաեւ Պէրլինի Բժշկական Համալսարանի ընդհ. ախտաբանութեան հոշակաւոր ուսուցիչ Բրօք. Ֆօն Լայտըն:

ՏՕՔՔ. Տ. ԱԼԼԱՅՎԷՐՏԻ ՈՐԴԻ

ՏՐԱՊԻՉՈՆԻ առաջնորդ Տ. Ներսէս եպիսկ. Ասլանեանի մահագոյժը հասաւ չարթուս մէջ և Ս. Պատրիարքը ցաւակցական հեռագիր մը ուղղելով՝ յանձնարարեց որ օծման և յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուի արժանավայել հանդիսաւորութեամբ: Օրաթերթերը հրատարակելով հանդուցեալին կենսագրութիւնը, մասնաւորապէս շեշտեցին անոր պարկեշտ, ուղղամիտ և անշահախնդիր եկեղեցականի հանգամանքը եւ յարգանք մատուցին իր յիշատակին: Տ. Ներսէս եպիսկ. Ասլանեան 63 տարեկան էր, մօտաւորապէս 40 տարիէ ի վեր ընդգրկած՝ կուսակրօն եկեղեցականութիւնը: Վարած է առաջնորդական եւ այցելու հովուի պաշտօններ՝ Թօքաթ, Իզմիր, Վան, Ռոստոմ, Տրապիզոն եւ այլն., բացի Կ. Պոլսոյ մէջ իր վարած Բերայի քարոզչութեան եւ Պատր. Փոխանորդի պաշտօններէն: Ստակրօն եւ անաշտու բնաւորութեամբ եկեղեցական մըն էր որուն մահը զգալի եւ ցաւալի կորուստ մըն է մեր հոգեւորականութեան համար:

Կրօն. Ժողովի երեքշաբթիի և իսառն Ժողովի չորեքշաբթիի նիստերուն մէջ օրհնուեցաւ հանդուցելոյն յիշատակը, «Հոգեոց» արտասանելով:

(*) Լոքէի լուծոյթ ըսելով պէտք է հասկնալ դաղջ և լաւ օղիտացեալ աղի ջուր:

ՄԱՏՈՒՆ

Մատուռ մը գիտեմ, տեղ մը, խնկելի,
Ուր կէս գիշերին պիտի տանիմ զայն.
Գորզը ծածկուած թերթերով ծաղկի,
Զարդարուած նրբին ժանեակով խորանն:

Պարզամիտ կոյսեր, աղմոյն, ոսկեզոյն,
Ակնարկներն վերցնեն մաքրութեամբ լեցուն,
Ու պզտիկ աչքերն մոմերու քթթուն,
Փալըրիկն մութին՝ թիթե ու սիրուն:

Անոնք ստուերոտ մէջ տերեւներուն՝
Որ դողդոջ քօղով պատեն դասն համակ՝
Կը կազմեն լուսանցք մը ամուլներուն,
Մասրենիներով եզերուած ճերմակ:

Զգլխիչ պիտի ըլլային ծաղկունք
Շահօքրամներն ու եղբււաններն,
Գիշերն այն բոլոր սիրամոյն տամուկ՝
Մանաւանդ վարդերն ու միմօղաներ:

Ու գեղգեղով մը նուրբ հեռացրիւ,
Ինչպէս կը լսուի հովիկն իրիկուան,
Պիտի հետեւէր դաշնակն ալ մեղմիւ,
Բուրվառներու քաղցր ու անուշ շարժման:

Ու դպիրները՝ անտեսանելի
Պիտի երգէին: Պիտի չնչին
Մեղկ բուրումները զգլխիչ խունկի,
Թօշնած վարդերու խառնուած հոտին:

Պիտի ունենար ան տեղ ժանեակի
Մետաքսէ քօղն իր համակ ոսկեհեր.
Կը ճանչնամ մատուռն, տեղ մը խնկելի:
Սիրուհին, աւա՛ղ, բայց դեռ չե՛մ գիտեր:

Զի իմ պաշտելիս ճակատով կոյսի,
Երկիր մը կ'ապրի առասպելային,
Երազներու վայրն, ուր ոչ ոք հասնի,
Ուր քամելիոններ լոկ կապոյտ ծաղկին:

Թարգմ.

ԷՏՄՕՆ ԲՕՍԴԱՆ

ՄԱՏԹԷՈՍ Ֆ. ԷՄԼԻՆԱՅԵԱՆ

ԱԼՔՈՒՆ ԱՂԵՏՆԵՐԸ(*)

Ալքոլամոլութիւնը աղէտ մըն է որ աւերներ կը գործէ, մարդկային ընկերութիւնը, ազգը, սերունդը կը փճացնէ: Իր վնասները բազմատեսակ են, բայց գիտութիւնը կրնայ դիւրաւ դէմ դնել անոր: Աստուծոյն չի գար անիկա, այլ մարդոց ստեղծածն է, սկզբնապատճառ ունենալով մոլութիւնը:

Բարոյական ու բժշկական գիտութիւնները ամէն ժամանակ յաղթած են մոլութեան, հետեւաբար դարմանելի աղէտի մը վրայ է խնդիրը:

Ի սկզբան, մարդս չէր իր տրամադրութեան ներքեւ միակ ըմպելի մը ունենալով. ուստի ջանաց բնութեան բոլոր արտադրութիւնները գործածել, զանոնք ալքոլական ըմպելիքներու վերածելու համար: Եւ ասիկայ տեղի ունեցաւ այն երկիրներուն մէջ մանաւանդ ուր այգին չէր հասներ: Հետեւաբար, խմորուած ըմպելիքները պատրաստուած են ամէն ժամանակ և ամէն ժողովուրդներու մէջ, նոյն իսկ ամէնէն նախնականներուն և ամէնէն վայրենիներուն մէջ: Պլինոս կը թուէ տասներկու տեսակ ալքոլական ըմպելիքներ: Իրմէ հազար ութը հարիւր տարի ետքը, Բատլօ Մօնդէկաձա կը յիշատակէ մօտաւորապէս հարիւր—վաթսուն զանազան ըմպելիքներ: Եւ, այս թիւին մէջ չեն, ալքոլը, օղին և կարգ մը խմելիքներ որոնց երկար ցուցակը կը ներկայէ:

Այսօր, ալքոլական ըմպելիքները անհուն պէսպիսութիւն մը ունին և անոնց տեսակը անհաշուելի է:

Չիկայ ցաւ մը, տառապանք մը որուն

(*) Ծ. Խ. — Յարգելով Թաւշանճեան Մրցանակին վերաբերեալ տրամադրութիւնները որոնք չեղտուած են մեր այսօրուան թիւին մէջ երեսցող Յայտարարութեան մէջ ևս, երկրորդ անգամ ըլլալով կը հրատարակուի տարակենց Պ. Բիէռ Արէնի յօդուածը որ քննիչներուն կողմէ արժանի դատուած է Բ. Մրցանակի:

չենթարկուի ալքոլամոլը: Եթէ աչքէ անցունենք այն խանգարումները զորս կը պատճառեն ալքոլական ըմպելիքներու բաղադրութեան մէջ ներմուծուած տարրերը, ալքոլամոլին քաջած հիւանդութիւններն ու ցաւերը աւելի՛ բազմատեսակ ու աւելի՛ անուելի կ'ըլլան:

Ալքոլամոլութիւնը կը վնասէ միանգամայն ընտանիքին, սերունդին, համայնքին: Եթէ ալքոլամոլը թշուառ ու տառապազին կեանք մը անցունէր միայն, եթէ յիմարանոցի մը կամ հիւանդանոցի մը մէջ մեռնէր կամ անձնասպան ըլլար, աղէտը այնքան մեծ չպիտի նկատէինք: Բայց չարիքը հօտ կանգ չառնէր: Նախ, և յաճախադէպ կերպով, ալքոլամոլը եղեռնագործ կը դառնայ, գող կ'ըլլայ, մարդասպան կ'ըլլայ. յետոյ, վնաս կը հասցնէ իր ընտանիքին, կնոջը, զաւկերուն, դառնութեամբ կը համակէ անոնց կեանքը և կը պատահի իսկ որ անոնց կեանքը խլէ: Սերնդականութեան տեսակէտով, ալքոլամոլութեան հետեւանքները չ'ոտ աւելի վտանգաւոր են. արեւցողներու դաւ կընենքն ոմանք ապուշ կ'ըլլան, իշխներ մտաւորական տկարութեան նշաններ կը կրեն, բարոյական վատթարացումով մը որ ընկեալային ստորին խաւերուն վրայ կը նետէ զանոնք. անոնց մէջ պղտիկ թիւ մը չեն կազմեր նաեւ լուսնոտներ, խուլ—համբեր, խոյլաւորներ, ջղադարներ և այլն:

Պէտք եղածին չափ ուշադրութիւն չենք դարձուններ մանուկներուն ալքոլամոլութեան վրայ. կը խնդանք, կը չատանանք ուսերնիս թոթուելով: Եւ սակայն Տօքթ. Պառաթիէ կը հաւաստէ մեզ թէ մեծապէս կը սխալինք այդպէս չարժեւորելով: — «Եթէ ալքոլամոլութիւնը գոյութիւն չունի, ուրեմն ի՞նչ անձանթ պատճառի հետեւանքով է որ դարուս տղաքներուն մտաւորականութիւնը այնքան տխուր կերպով կը չեղի ուղիղ ճամբէն: Ի՞նչ բացորոշ չարժանիք կայ անոնց բնաղդները դէպի չարը մղելու և անոնց մատաղ ուղեղը յոռի գաղափարներով տոգորելու համար»:

Յետոյ, եթէ նկատողութեան առնենք սերունդը, պիտի կրնանք հաստատել թէ

ալքոլամոլութիւնը գլխաւոր պատճառներէն մէկն է համայնքի մը պակսելուն և անկմանը :

Արդ, ո՞րն է այն աղէտը որ կրնայ հաւասարիլ ալքոլամոլութեան առաջ բերած ինքաններուն :

Արեւեցողները երեք դասակարգի կրնան բաժնուիլ . — մոլիները, արհեստով խմողները և կանոնաւոր խմողները, թէև շատ մը պարագաներու մէջ բոլորովին տեսական է այս բաժանումը : Մոլիները անոնք են որոնք գինովութեան պատճառած բիրտ հաճոյքին համար միայն կը խմեն : Արհեստով կամ արհեստի բերամբ խմողները կը մղուին կարգ մը պայմանադրական պարտաւորութիւններու հետեւանքով : Գործեր կան, սակարկութիւններ, առևտուրներ, որոնք գինետան մէջ կը կարգադրուին և յաճախ գինեպաններն իրենք ալ կը հարկադրուին յաճախորդներուն հետ բաժակ պարպել՝ զրգիւ ըլլալու համար : Մեքենագործները, հնոցպանները, երկաթի ու կրակի հետ աշխատող գործաւորները իրենք ալ զոհերն են «արհեստին, որ արեւցողութիւն կը պահանջէ» : Կազդուրիչ ըմպելիքները, ապսէնթը մանաւանդ, այդ վերջին դասակարգին մէջ աղետալի աւերումներ կը գործեն և ծանր հարկ մը վճարել կուտան անոնց՝ թոքախտին, վասնզի՝ ինչպէս ըսած է Հայէմ՝ «յաճախ գինետան սեղանին վրայ կըստացուի թոքախտը» :

Երրորդ դասակարգը կը կազմեն, ինչպէս ըսինք, կանոնաւոր խմողները, անոնք որ առողջական պատրուակով և իբր թէ կազդուրուելու համար կը խմեն, չափաւոր քանակութեամբ, գինի և քսիք՝ քիչ շատ բժշկականապէս պատրաստուած, բայց միշտ ալքոլով խառն, որոնք՝ իրենց յաւակնոտ են թաղրութեան հակառակ՝ աւելի ինքսակար են քան օգտակար :

Արեւնալու այս զանազան եղանակներուն ամէնուն ալ հետեւանքը կ'ըլլայ՝ ի ծնէ առողջ կազմուածքի մը մէջ փոփոխութիւններ առաջ բերել մարմնական գործարաններու, մանաւանդ չնչառութեան վրայ, որոնք ընդունակ կը դառնան թոքախտէ վարակուելու :

Սա ճշմարիտ է թէ գինին և գարեջուրը

նուազ զոհեր կ'ունենան, ո՛չ միայն անոր համար որ զանոնք գործածողները չափը չեն անցուններ, այլ մանաւանդ անոր համար որ այդ ըմպելիքները շատ ալքոլ չեն պարունակեր : Նոյնը չէ սակայն միւս ոգելից ըմպելիքներուն համար, մասնաւորապէս օղին, քոնեաքը եւ ամբողջարքը «կազդուրիչ» են. որուն՝ վէրմուտ, ամէն, են :

Այս ոգելից ըմպելիքներն են ահա որոնք ամէն օր կը թունաւորեն մարդկութիւնը, վասն զի՝ կը կրկնենք՝ իրենց պարունակած խառնուրդ ալքոլէն զատ, կը պարունակեն տեսակ տեսակ հիւթեր, մէկը միւսէն աւելի թունաւոր, և այս բոլոր մկնաճգտական եւ թմրեցուցիչ հեղուկները՝ կեանքը կարճեցնելով արեւցողը յաճախ հիւանդանոց կամ յիմարանոց երթալու կը հարկադրեն : Այս խմելիքները աւելի աղետալի դարձնող պարագան սա է թէ՛ մեծագոյն մասամբ խարդախուած են : Եւ արդարեւ, անձնական խուզարկութիւններ ու տարրալուծումներ զորս կատարած եմ այստեղ սպառողը կարգ մը խմելիքներու վրայ, ապացուցած են ինձ թէ խարդախեալներուն թիւը չա՛տ աւելի է քան հարադատներուն :

Ուստի պէտք է հակազդել, և հնար եղածին չափ շուտ : Առանց վայրկեան մը կորսնցնելու պէտք է սկսիլ հակալքութեան նուիրական պայքարին, գէթ փրկելու համար զանոնք զորս ալքոլը չէ զգետնած տաւալին : Փրկե՛նք մանաւանդ մանկութիւնը : «Ալքոլամոլութեան սահմաններն առ յաւէտ գլել անցնելէ առաջ, մարդ պէտք է գիտնայ թէ տակաւին կրնայ բժշկուիլ, կրնայ բարելաւել իր վիճակը . հակառակ կը կայանայ ալքոլամոլը յուսադրելուն մէջ թէ անհնար չէ իր վերադարձը դէպի ուղիղ ճամբան եւ ասոր համար իրեն հայթայթելու է հարկ եղած ֆիզիքական ու բարոյական միջոցները, որ պէս զի կարենայ հրաժարիլ իր դեգերանքներէն . հարկ է ցոյց տալ իրեն՝ ամէն վայրէկեան իր ոտքերուն տակ բացուած անդունդը, խիւղ գինքը ալքոլին յարումէն, միշտ եւ ամէն ժամանակ ներշնչելով առողջ դադարներ ու փրկարար օրինակներ : Խօսքի

գրիչի, տեսնուածներու ազդեցութեամբ, պէտք է հեռացնել զինքը իր մոլութենէն, որուն գերին եղած է. և այդ մարդը, որ արեքցութեան հակում ունի կամ արեքցող ծնողաց զաւակ է, եթէ համոզուի թէ ինչ պիտի ըլլայ իր վախճանը, եթէ նախազգայ իրեն սպառնացող վտանգը, կրնայ տակաւին վերադառնալ կանոնաւոր վիճակի մը եւ ազատիլ ալքով թունաւորուելէ»:

Երէկուան ալքովամոլին, ինչպէս վաղուան ալքովամոլին՝ փրկութեան յենարաններ պէտք են: Եւ այդ յենարաններն ուրիշ բան չեն կրնար ըլլալ, բայց եթէ վերը յիշուած միջոցները՝ գրիչով, խօսքով մաքառելու, համոզելու որ ետ կենան իրենց այդ մոլութենէն:

Ալքովի չափանց գործածութեան կարեւորագոյն միջոցներէն մէկն ալ այն է որ մարդուն զգայարանքներուն վրայ կ'ազդէ և անոնց կանոնաւոր գործունէութիւնը կը խանգարէ: Յաճախ՝ ալքովամոլը կատարեալ անզգայութեան կը մատնուի, շատ անգամ ալ բանդադուչանք կ'ունենայ: Կը պատահի երբեմն որ երեւակայական ճանճեր տեսնել կարծէ իր շուրջը, որովհետեւ ալքովը աշուրներու գորութիւնն ալ կը խաթարէ: Եղած են ալքովամոլներ որոնք անա՛նկ կարծած են թէ մուկեր կը շրջին իրենց մարմինն վրայ: Լսողութիւնն ալ անվթար չի մնար ալքովամոլին քով, ինչպէս չի մնար նաև շօշափելու կարողութիւնը: Թուենք նաեւ այն միասը որուն կ'ենթարկուի ալքովամոլին միտքը: Այդ չէ՞ պատճառը որ բանականութիւնը կը կորսնցնէ, ըրածը թողածը չի հասկնար, անիմաստ աղաղակներ կ'արձակէ, կը կոտորէ, կը թափէ, և յաճախ՝ աւելի ծանր ու անդարմանելի արարքներ կը գործէ:

Մարդ երբ ու է ոգելից ըմպելիք կը խմէ, — քիչ կամ միջին քանակութեամբ, — իսկոյն տեսակ մը հրճուանք, ընդհանուր գրգռութիւն եւ ուղեղային գործունէութեան կենսունակութիւն մը կը զգայ: Բայց միեւնոյն ատեն՝ իր ուշադրութեան կարողութիւնն ու զգայարանքներուն ըմբռնողութիւնը կը նուազին: Այդ գրգռութեան կը յաջորդէ գլխու ծանրութիւն մը՝ ընկերացած մտաւոր կարողութեան աւելի կամ նուազ չեղուած տկարացման. ասկէ զատ՝ քալուածքը կը դեղեւի, բերանը կը չորնայ, թուքը կը թանձրանայ և խուխի կը վերածուի, գինովը

կը նեղուի նաեւ ստամոքսի անհանգստութեամբ եւ ցաւազին ու տաժանելի փրսխունքներ կ'ունենայ, շատ անգամ ալ դաւուկի (ictère, սարըլըք) կ'ենթարկուի, չնչառութիւնը կը խանգարուի և մորթը արեան կուտակման ենթակայ կը դառնայ:

Բայց երբ խմուած ալքովին քանակութիւնը կ'աւելնայ, այն ատեն՝ ուղեղային խանգարումները աւելի՛ կը չեղտուին, ուշիմութիւնը կ'անհետանայ, գինովը անզգայութեան վիճակի մը մէջ կ'իյնայ, չնչառութիւնը հոնդիւնի կը փոխուի, բազկերակը կը նուազի և սրտին գործունէութիւնը կը տկարանայ:

Ո՛ւր էր թէ ալքովամոլութիւնն ալ ունենար իր մանրէն...: Տօքթ. Պարաթիէ այս յատկանշական խօսքերով կը վերջացնէր իր մէկ բանախօսութիւնը՝ այս աւերիչ մոլութեան նկատմամբ: Այո՛, ո՛ւր էր թէ ալքովամոլութիւնն ալ ունենար իր մանրէն, որպէս զի կարելի ըլլար անոր դէմ մաքառիլ ու զայն ջնջել:

Եթէ ժանտախտը, քոլերան, դեղին տենդը և կամ համաճարակ մահացու համաճարակներ հազարաւոր զոհեր խլած են մարդկու թենէն, վստահ եղէք թէ ալքովամոլութիւնը միլիոններ խլած է: Մանաւաւ որ՝ համաճարակները պարբերաբար միայն երեւան կ'ելլեն, մինչդեռ ալքովամոլութիւնը ընդմիշտ գոյութիւն ունի:

Ասկէ զատ՝ համաճարակ հիւանդութենէ մեռնող մարդու մը զաւակը ոչ մէկ ֆիզիքական միասի կ'ենթարկուի այդ պատճառաւ: Արդ, ալքովամոլութեան համար այդպէս չէ. ալքովամոլը, իր ֆիզիքական քայքայումն ալ կը փոխանցէ իր սերունդին: Ընդունինք ուրեմն որ ալքովամոլութիւնը՝ շատ աւելի աղետալի եղած է մարդկութեան համար, քան ամէնէն սոսկալի համաճարակներն ու ամէնէն ահարկու պատեօբաղմները:

«Ալքովը եղեռնագործութեան ու խելագարութեան կը տանի մարդը. բանախն ու հիւանդանոցին ճամբան է» ըսած է տեղ մը Տօքթ. Մոնէն: Պիտի աւելցնեմ թէ ընտանիքին կործանումն է, սերունդին փճացումը և մեծագոյն աղէտը մարդկային ազգին համար:

ԽՐԱԴԱՐԱՐԱՆՆ ԵՐԵՎԱՆ

Ամեն. Տ. Մաղաքիա Օրմանեան Ս. Պատրիարքը՝ իր Պատրիարքութեան տասնամեակը թեւակոխելուն առթիւ, շաբթուս մէջ ընդունեց եկեղեցական և աշխարհական ծանօթ անձնաւորութեանց, Պատրիարքարանի պաշտօնէութեան, ժողովականներու և գրական ու լրագրական դասի ներկայացուցիչներու շնորհաւորութիւնները որոնց Մասիսի Խմբագրութիւնն ալ կը փութայ միացնել իր յարգալի խնդակցութիւնները:

Գաւառներէ ևս հետզհետէ շնորհաւորական նամակներ կը հասնին Ն. Սրբազնութեան:

Եգիպտոսէն կը գրեն օրաթերթերուն թէ Պօղոս փաշա Նուպար ծանուցեր է առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աղաւունիի, թէ Դահիբէի Գալստեան աղգ. երկսեռ վարժարանին վերաջինութեան համար դնուած հողին շուրջը յարուցուած դժուարութիւնները հարթուած ըլլալով, մօտեւս կառուցման պիտի ձեռնարկուի 3,600 քառակուսի մետր տարածութեամբ գետնի մը վրայ: Անոր մօտերը, Պուլաքի արուարձանին մէջ, պիտի կառուցուի Նուպարեան առեւտրական վարժարանը որուն բովանդակ ծախքը յանձն առած է Պօղոս փաշա:

*** Մասիսի ընդհատման միջոցին, օրաթերթերու «Պատրիարքարանի Լուրեր» ու բաժինին մէջ հաճոյքով կարդացինք թէ Տիար Յովհ. Թաւադեան յանձն առեր է իր ծախքով վերաջինել Դում-Գաբուի Մայր վարժարանը ուր ստացած է իր նախակրթութիւնը:

*** Ծանօթ փաստաբան և գրագէտ Յակոբ էֆ. Սթամպուլեան (Ատրուշան) զբոսադուրութիւնը ունեցաւ Կորնսնիւնի իր մայրը, Տիկին Մարիամ Սթամպուլեան, որ օղափոխութեան համար իր ծննդավայրը՝ Քէօթահիա ուղեւորած էր քանի մը ամիս առաջ և ուր կնքեր է մահկանացուն, կարճատե հիւանդութենէ մը ետք: Աղետալի

լուրը հեռագրաւ հաղորդուեցաւ իր որդւոյն որ մօրը վերադարձին սպասած պահուն՝ այս անակնկալ գոյժին առջև ընկճուած կը մնայ: Յուդարկաւորութեան ու թաղման հանդէսը կատարուեր են այս երկուշաբթի, Քէօթահիոյ մէջ, ցաւի ընդհանուր արտայայտութիւններով որոնք ուղղուեցան նաև այստեղ՝ հանգուցեալ տիկնոջ սգաւոր որդւոյն: Այս տխուր առթիւ մեր վշտակցութիւնները կը յայտնենք Տ. և Տիկին Յ. Սթամպուլեանի:

*** Լրագրական երկու տասնամեակներ թուորուեցան շաբթուս սկիզբը: Քիւզանդիոն օրաթերթը լրացնելով իր հիմնարկութեան 30-րդ տարին, թեւակոխեց տասներորդը. և Լոյս կրօնական շաբաթաթերթը՝ լրացնելով իր տասնամեակը, թեւակոխեց տասնամեակերորդ տարին: Կը շնորհաւորենք մեր պաշտօնակիցները՝ յարատեւութեան ու յաջողութեան մաղթանքներով:

*** Կարնոյ առաջնորդ Տ. Զաւէն Ծ. Վրդ., որուն եպիսկոպոսութեան վկայական տրուած է Կեդր. Վարչութեան կողմէ, արժանացաւ երկրորդ կարգի Մէճիտիէ պատուանշանի: Կայսերական այս բարձր շնորհին առթիւ կը շնորհաւորենք Ն. Գերապատուութիւնը որ իր հովուական պաշտօնին մէջ ունեցած պարկեշտ, ուղղամիտ և աշխատասէր ընթացքովը վստահութիւն և համակրանք գրաւած է միշտ:

*** Խառն ժողովին որոշմամբ, Տ. Գէորգ եպիսկ. Երէջեանի առաջարկուած է ստանձնել Ռումանիոյ Հայոց հոգեւոր հովուութեան պաշտօնը:

*** Պատրիարքարանի գործակատար Արիս էֆ. նախընթաց օր Ներքին գործոց նախարարութեան պաշտօնատունը երթալով, ի դիմաց Ս. Պատրիարք Հօր շնորհաւորեց Տպագրական Տեսուչ Վսեմ. Քէմալ պէյը՝ առաջին կարգի Մէճիտիէ պատուանշանի արժանացած ըլլալուն առթիւ:

Հիմնադիր—Կ. Ս. Իիթիօնիս

Տէր Է. Տէօրեան—ՏՈՒՄ. Երմիակոյ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի

CAISSE PATERNELLE

ՔԵՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԻ ՖՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՈԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.

Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻ ՖՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍ 62,750,000

Ուրեմն ընթացիկ տարածման վնասումներն վրայ պահանջուի համեմատու թիւնն է 74%, որով ՔԵՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տալով երաշխաւորութիւնն:

Ընկերութեան վարչական խորհուրդը կազմուած է Ծրանաւորի ամէնէն Նշանաւոր դասաւորներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԵ ՊՐԻՍ, Արեւմտեան Ծրանաւոր, երկաթուղեաց ընկերութեան եւ Բրէտի Լիօնէի վարչական խորհուրդի անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՌ, Դասնաւորանքի ընկերութեան վարչական խորհուրդի անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԵՆ ԿԻԼԷՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Բրէտի Լիօնէի.

Թաւրջիոյ Տնօրէն Գ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համաժ, Բասաժ ԲաթրճճճՅՈՂՈՒ

Ընկերութեան վառ. տեղեկագրութիւն տալով համար դիմել Բրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ. — Շահաւոր դիմել պիտի տրուի այն ֆնդիկին որ կաշեւոր արգիւնք մը իր ագործած բլլայ անձնապէս:

2—10

Ա.Դ.Ա.Մ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն տեսակ բոհաֆիլի ապրանքաց

Մեծ—Շուկայ, Բիւրքինքու դրան կէց, Բ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլթան—Համաժ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօնաֆիլի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց տառակ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տառակութիւն, եւ դիւրամատ չելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հաւարտութեան:

Աղաժ վարդան մեծապէս գոհ թողւած է իր բազմաթիւ յաճութիւնները:

պէտք է որ Շուկայ ելլող ամէն ընտանիք արցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հոգալու համար:

2—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտորէր եւ երկար տարիներէ ի վեր կը դարձնէ ստամոքսի, աղիաց, միզային ճանապարհու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին եւ նոր գլխական թաւերը, Այս վերջին թաւերը՝ առանց ստամոքսի խանգարման եւ նորագոյն միջոցներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը Զօրեքուրճճճճ օրերը միայն ճրի: 2—10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ԳԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհաբեղեցնելու, ամեն սեռակ կահ կարասիներու եւ ամենեւն անհատի
հազուսներու, ելն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց
պրանքներուն տեսակները աւելի ճշմարտեմբար եւ մեր լարգելի յաճախորդաց աւելի գո-
հացում ապու նպատակաւ, ՈՍԿԵՐՉՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ
դատ. կիւնքու եւ արեւել համար՝ եւ մեծ եւ փոքր ամէն տարիքի յատուկ ՁԴԵՍՏԵՂԷՆ-
ՆԵՐՈՒ, ձերմակեղէններու եւ (թօնաֆիլ) եւ միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ
ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լտմաներ, օֆիսէներ եւ այլն.) ճոխ մթերանց մը հաստատած
ենք. խիստ դիւրամատչելի գիներով, եւ կանխիկ եւ ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակիրի յաճախորդները, որ հաճին դիմել վերայիչեալ վա-
ճառատունները, ուրկէ անտարաքայն անհուն գոհանալիութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին
5 շաբաթական վճարմամբ:

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:

3. Կանխիկ ծախսած ապրանքներէն միմիայն ադամանդեալ գոհարեղէնները երբ գոր-
ծածուած բայց անվնաս մնացած ըլլան՝ հարիւրին 10 զեղչով եւ կանուսին: Իսկ ապա-
ռիկ ծախսած եւ անվնաս մնացած միմիայն ադամանդեալ գոհարեղէններն ալ հարիւրին
15 զեղչով եւ կանուսին:

6-10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարաժական վճարմանց հա հար հաւարիչներ ընդմիջող պատրաստ են:

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉԱՅ ՓՈՂՈՅ. ԹԻԻ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ. ԿԵԱՆՔԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուղարկով արտօնուած

Կեդրոնատեղին Բեզերսպուրկ, իրեն յատուկ յէնք:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութեան կ'ընդունի
ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-
ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԵՎԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵՎԱՌՎ ՈՒՂԵՒՈ-
ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կառ-
բուելուն դէմ:

Ընկերութեան դրամադրուիւր, ամբողջապէս վճարուած 10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 149,852,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-
դրուիւր եւ վնասուց հատուցում 355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տեղոս 64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Աղաբեան
Խան, Վոյվոսա, Ղաւթիւր,

6-10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲՍԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ց Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ց Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	129,000,000	Ֆր.
Լնթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՃՆԵԼ ԱՐԵՒԵԼԿԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեռով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոն ապահովագրողք ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբուրքիցներէն, որոնք կենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքըրնը Օղլու

Մասնաճիւղ Ղալաթիա, Իսայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

3-10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱՆ. ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒԳՍ ԱՌԻՏ ԵՎ ՊԱՎԻԼՈ

ԼԱ ԷՍԹՐԷՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւունքն է Ի. Կ. Պոլիս, Բուքսթ Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Ալիպաֆ Խան,

3-10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՂՏՈՆ 1782 ԻՆ
ԿԸ ԳՈՐԾԷ Ի ՓՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ
ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
Իրամագլուխ եւ պահեստի դրամ

• Անգլ. ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ ռուսկ հրդեհի դէմ Ապահ.
վազրադան Ընկերութիւն մըն է, ծանօթ
իւր պատուաւորութեամբ եւ վէճաւոր մէջ
իւր անմիջական վճարումներով:

ՖԻՆԻՔՍ Կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ ամէն տեսակ անշարժ եւ
շարժուն ստացուածք, յոյժ նպատակաւ
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.
ՈՒՂՂՍՄՏՈՒԹԻՒՆ Եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Յոգն վճա-
րած է առաւել քան 27,000,000 անգլ.
ոսկի:

Ընդհ. գործակալ Պալսոյ եւ գաւա-
ռաց: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Վերալիս խան, Պանգ Օբսմանի Բոյ
Ղալաքիա:

Փոխ գործակալը ի Պալիս
ՌՈՒՐ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԻՔԵՆԱՆ
Էմիւն պէյ խան Ֆնսզլեան խան
Զեմիլ բիւզեբու

1—10

Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԸՆԲՐԱՆ, ՄԵՐ ԳՈՂԱՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ

ԴԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. ՈՒՐ. օրերը 6եմ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ 9—10

ՅՄԱՐԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

ՌՈՒՔԻ ԿԵԱՆԲԻ, ՕԴԻՏԻ, ԱՐԿԱԾԻ, ԳՄԱՆ ԲՈՇԱԿԻ ՆԻՐԿԵՐ
VICTORIA ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԿԵԱՆԲԻ ԿԵԱՆԲԻ ԿԵԱՆԲԻ ԿԵԱՆԲԻ
DE ԲԵՐԼԻՆ ՄԱՆԻՑ ԲԵՐԼԻՆ ԿԵԱՆԲԻ ԿԵԱՆԲԻ ԿԵԱՆԲԻ
BERLIN ԲԵՐԼԻՆ ՎճԱՐՈՒՄՆԵՐԸ ՆՊԱՀԱՎԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՆԵՐՈՎ ԿԵԱՆԲԻ ԿԵԱՆԲԻ
սկսեալ 5 շաբաթէն

Ապահովագրեալ գումար 1904ին Ֆր. 1,491,279

Պահեստի դրամ 1904ին » 605,718,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին առ-
ջայականորաւարակով եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քէն:

ԸՆԿ. ԴՐԱՄՍՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս. Պանքա
եւ Բրէտի Լիոնէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
Ա. Կ. ԼԻԻԶԵՆԱ

Կալաթա, Պերեքիս խան
Օրիանդ-Պանգի դեմ